



ԵՐԿՈՒՆԱԲԹԻ, 13 ՅՈՒՆԻՒՆ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 31

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ

Ով Տէր, քեզի ապաւինեցայ, թող ամօթով չմնամ բնաւ:
 Արդար ես դուն, ապարէ վիս:
 Ականջդ ինձի խոնարհեցուր, եւ փութա՛, ապարէ վիս:
 Ինձի պաշտպան, ապաստանարան եղիր:
 Իմ ապաւենս եւ իմ մարոցս դուն ես. դուն ինքդ վիս առաջնորդէ եւ պաշտպանէ,
 որպէսզի քու անունդ փառաւորուի:
 Դուն կ'ապրես անոնք՝ որոնք սնորհի կուռքեր կը պաշտեն,
 մինչ ես ինքզինքս քեզի վստահած եմ:
 Քու սիրովդ պիտի ցնծամ եւ ուրախանամ,
 որովհետեւ թշուառութիւնս տեսար, ճանչցար տառապանքներս,
 եւ վիս թշնամիին ձեռքը չմարնեցիր,
 այլ՝ վրանգէն վիս դուրս բերիր եւ վիս ոտքի կանգնեցուցիր:
 Ով Տէր, ողորմէ ինձի, որովհետեւ նեղութեան մէջ եմ.
 Կրտսերներէս փրկարացան աչքերս, հոգիս եւ մարմինս:
 Տառապանքէն կեանքս մաշեցաւ, տարիներս հառաչանքով անցան:
 Շարերու բամբասանքը կը լսեմ, վախը չորս կողմս պատեր է.
 մարդիկ ինձի դէմ կը միաբանին, եւ կը խորհին թէ ինչպէս հոգիս առնեն:
 Բայց ես քեզի վստահած եմ Տէր, Դուն ես Աստուածս:
 Օրհնեալ ըլլայ Տէրը, որ իր սքանչելիսերը ցոյց տուաւ ինձի՝
 երբ նեղութիւններով պաշարուած էի:
 Սակայն դուն, Տէր, իմ աղօթքիս ձայնը լսեցիր երբ քեզ օգնութեան կանչեցի:
 Օն, քաջ եղէք ու զօրացէք, դուք՝ բոլորդ, որ ձեր յոյսը Տիրոջ վրայ դրեր էք:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
 աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

20 ԳԼՈՒԽ

ԵՐԵՄԻԱՅԻՆ ԲԱՂԽՈՒՄԸ ՓԱՍՈՒՐԻՆ ՀԵՏ (20:1-6)

Աստուծոյ պարգամները շար յաճելի չեն մարդոց համար, մանաւանդ՝ անօրէններուն: Այսպիսի վիճակ մը պիտի սրբազանուի, որուն մասին արդէն Տէրը սկիզբէն յայտնեց Երեմիային ըսելով. **«Անոնք քեզի դէմ պիտի պարտազանեն, բայց պիտի չկրնան քեզի յաղթել. որովհետեւ ես քեզի հետ եմ քեզ ազարելու համար»** (1:19):

Երեմիա Աստուծոյ պարգամները կու գայ փոխանցելու, մինչ այդ Փասուր, որ Տիրոջ փառք մէջ, այսինքն՝ Տաճարին վերակացուն է, որ ունի հեղինակութիւն, իշխանութիւն այս պարագային բանք դնելու սուր մարգարէները: Այստեղ կարծէք Երեմիա մարգարէն իբրեւ այդպիսին կը ներկայանայ, երբ Աստուծոյ պարգամները կը փոխանցէ, այնպէս կը թուի թէ սուր մարգարէ է, անոր համար ալ Փասուր զինք կը բանարկէ: Կը նմանի Յովհաննէս Մկրտիչին, երբ Հերովդէս թագաւոր ձերբակալել փութեմ էր, շղթայել եւ բանարը նետել, իր եղբօր կնոջ՝ Հերովդիայի պարճառով: Որովհետեւ Յովհաննէս կ'ըսէր Հերովդէսի. **«Մեր Օրէնքը չի թոյլարարեր որ անոր հետ ամուսնանաս: Այս պարճառով՝ Հերովդէս կ'ուզէր սպաննել Յովհաննէսը, բայց ժողովուրդէ կը վախճար, քանի մարդիկ զայն իբրեւ մարգարէ կ'ընդունէին»** (Մատթ 14:3-5): Ոչ միայն Երեմիայի կամ Յովհաննէս Մկրտիչի պարագան, բոլոր ժամանակներու մարգարէները, որոնք Աստուծոյ պարգամները կը փոխանցէին ու կը փոխանցեն նոյն վիճակն է որ կը սպասուի, որուն օրինակը նաեւ Քրիստոս Իր իսկ կեանքով ցոյց պիտի տար: Եթէ ինծի ըրին ձեզ ալ պիտի ընեն: Սա կը նշանակէ, թէ աշխարհը պարտասար չէ ընդունելու Աստուծոյ պարգամները, որպէսզի դարձի գայ ու Աստուած ալ փրկէ զիրենք: Առաւել եւս, իբրեւ սուր մարգարէներ նաեւ բանարկելու: Որովհետեւ Աստուծոյ պարգամները անոնց անդորրը կը խանգարէ, ուստի պիտի չուզեն լսել, այլ պիտի փորձեն լրեցնել: Փասուր ալ նոյնը պիտի ըներ Երեմիային զինք բանարկելով:

Հերաբրբրականօրէն, Աստուածաշունչին մէջ երբ անունները կը փրոյն այդ անուններու երին եղող իմաստը նաեւ բան մը կը յուշէ, կացութեան փոփոխութիւն անձին վերաբերող: Ահա այդ օրինակներէն մէկը նաեւ այստեղ կը գտնեն: Երբ Փասուր Երեմիա մարգարէ կը բանարկէ, Երեմիա կ'ըսէ Փասուրին. **«Տէրը քու անունդ Փասուր չկոչեց, այլ՝ Մակոր-Միսասայիս, որ կը նշանակէ ամեն կողմէ վախ»** (20:3), որուն կը յաջորդէ նաեւ բացատրութիւնը այս անունի փոփոխութեան: Գալիք արհաւիրքը եւ կոտորածը, որ ուրիշ բան պիտի չըլլայ եթէ ոչ ամեն կողմէ վախ ու սարսափ: Սա կը նշանակէ, եթէ մարդը ականջ չի տար Տիրոջ խօսքերուն, որպէսզի սրբագրեն իրենք զիրենք, այն արեւն գալիք պարտուհասներն ու դժբախտութիւնը վախ պիտի պարճառեն անձին, առաւել եւս իր շրջապատին: Այս բոլորը ինչո՞ւ: Որովհետեւ սուր մարգարէութիւն ըրիր: Այսինքն՝ մտիկ չընելով Երեմիային, ու քաջալերով ժողովուրդը որ ապաւինին Եգիպտոսի պարտազանելու համար Քաղդիացիներու դէմ: Փոխանակ Աստուծոյ վստահելու ու Անոր պարգամները լսելու:

ԵՐԵՄԻԱ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԸ ԳԱՆԳԱՏԻ (20:7-18)

Անկեղծ արտայայտութիւն մը, որ Երեմիա մարգարէն կ'արտայայտուի: Երբ ան կոչուեցաւ այս պաշտօնին, մարգարէանալու ու Աստուծոյ պարգամները փոխանցելու ժողովուրդին, իր կամքով չէր, առաւել եւս հանգստաւեր պաշտօն ալ չէր: Այլ Աստուծոյ կողմէ ընտրուած, մօրը որովայնին մէջ փակաւին կը կազմաւորուէր արդէն Տէրը զինք ընտրեց, սրբեց ու պարտասրեց: Հակառակ այն իրողութեան, որ Երեմիա չէր ուզէր, որովհետեւ կ'ըսէր. **«Ես խօսիլ չեմ գիտեր, որովհետեւ ես մանուկ եմ»** (1:6): Տէրը կը պարասխանէ ըսելով. **«Մի՛ ըսեր թէ ես մանուկ եմ, որովհետեւ ուր որ քեզ դրկեմ պիտի երթաս, ու ինչ որ քեզի պարտուիրեմ՝ պիտի խօսիս: Անոնց երեսէն մի՛ վախճար, որովհետեւ ես քեզի հետ եմ քեզ ազարելու համար»** (1:7-8): Այս բաժինին մէջ ահա Երեմիա կը ներկայանայ իր մարդկային վիճակովը, որ խորքին մէջ ինք իր անձնական կարողութեամբ եւ ճիգերով ի վիճակի չէ փանելու այս կացութիւնը, եթէ երբեք Աստուծոյ առաջնորդութիւնը չըլլայ, որովհետեւ Աստուած այդպէս ալ խոստացաւ իրեն. **«Անոնց երեսէն մի՛ վախճար, որովհետեւ ես քեզի հետ եմ քեզ ազարելու համար»**: Մենք ալ յաճախ կ'ունենանք այնպիսի պահեր հրաժարելու, որ ալ ի վիճակի չենք փանելու այդ բոլոր դժուարութիւնները: Այդ մէկը խոստովանիլը ցոյց կու տայ մեր փրկար բնութիւնը, առաւել եւս

երբեք չվարահեղու մեր անձերուն, որովհետեւ այն աստիճան մեր մէջ կ'արթնայ հպարտութիւնը: Ահա Աստուծոյ ողորմութիւնն է, Անոր փրկած խոստումն է որուն կ'ապաւինի Երեմիան, որպէսզի շարունակէ իրեն փրկած առաքելութիւնը, այլապէս եթէ հրաժարի, սրտին մէջ կրակ պիտի վառի, ու ոսկորներուն մէջ բորբոքի: Այնպէս կը թուի, որպէս թէ Երեմիա ձախողած ըլլար իր առաքելութեանը մէջ, որովհետեւ փրկած պարգամներուն մէկը մտիկ ընող չկայ, ընդհակառակը՝ աւելի կը չարախօսեն, կ'արհամարհեն: Այս վիճակին դիմաց, Աստուծոյ փրկած խոստումին վրայ յոյսը դնելով ու իր դասը Աստուծոյ արդարադատութեան յանձնելով կը շարունակէ: Որովհետեւ Աստուծոյ փառքին նկատմամբ մարգարէին նախանձախնդրութիւնը որպէս այրող կրակ հանգիստ պիտի չձգէ զինք: Միւս կողմէ, ժողովուրդին մեղքը, ու անոնց կորուստը պիտի չուզէ, անոր համար ալ յանձն կ'առնէ երթալ խօսելու եւ Աստուծոյ պարգամները փոխանցելու, որքան ալ անոնք լսողներ ու արհամարհողներ ըլլան:

Ահա անմիջապէս ինքզինք կը վերագրնէ Երեմիա, երբ կ'ըսէ. «**Բայց Տէրը ինձի հետ է զօրաւոր ախոյեանի պէս**» (11 հմր): Հակառակ կրելիք նեղութեան, դժուարութեան, ու յաճախ յուսահատութեան, այս խօսքերը կու գան ներշնչելու ու քաջալերելու որպէսզի զօրանայ, ու Աստուծոյ ապաւինելով շարունակէ իր առաքելութիւնը: Տէրը զօրաւոր է ու ախոյեան: Զօրաւոր իմ կողքիս, ախոյեան՝ յաղթելու թշնամիներուս:

Պահն է, որ Երեմիա մարգարէն աղօթքէն փառաբանութեան կ'անցնի. «**Տիրոջ երգեցէք, Տէրը գովեցէք**» (13 հմր): Այդ դժբախտ պահը ալ վերացաւ, հասած է պահը շնորհակալութեան, որովհետեւ Տէրը ինք իր փրկած խոստումին համաձայն պիտի գործէ: Այս փոփոխութիւնը փեղի կ'ունենայ երբ ամբողջական հաւատք կը ցուցաբերէ Երեմիան Աստուծոյ փրկած խոստումին: Ահա Տէրը. «**Տնանկին հոգին չարագործներուն ձեռքէն ազատեց**» (13 հմր): Ո՛վ է փնանկը, եթէ ոչ մարգարէ ինք:

Զարմանալի արտայայտութիւն մը, որ սակայն յաճախ կը հանդիպինք այլ փեղեր, եւ կամ մենք իսկ կ'ունենանք նոյնը. «**Անիծեալ ըլլայ այն օրը, երբ ես ծնայ**» (14 հմր), այսինքն՝ երանի ծնած չըլլայի: Նոյն արտայայտութիւնը կը գրենք Յոբի գիրքին մէջ 3:3: Գալիք ահաւոր վիճակը նկարի առած, մարգարէն պիտի նախընտրէր երբեք ծնած չըլլար: Այդ մարդը ըլլայ այն քաղաքներուն պէս, որոնք Տէրը կործանեց առանց խնայելու: Ո՛ր քաղաքները Տէրը կործանեց առանց խնայելու: Սողոմ եւ Գոմոր քաղաքները:

Տակաւին, կ'ուզէ, որ մօրը արգանդին մէջ արդէն մեռած ըլլար (17 հմր): Այս բոլորը ցոյց կու տան, եւ իբրեւ օրինակ մեզի, թէ Աստուածաշունչը մեզի կը ներկայացնէ այնպէս ինչպէս որ կան վիճակները, այնպէս ինչպէս որ է մարդը իր փկարութեամբ, թերութեամբ, որ միայն կրնայ ապաւինիլ Աստուծոյ եւ ոչ թէ իր ուժերուն: